Ինչպես ապահովագրել դեռահասին սեռական բռնությունից

Ամբողջ աշխարհում վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ աճել են ժամադրության ընթացքում սեռական բռնության դեպքերը և ցավոք, հիմնական բռնության ենթարկվողները դեռահասության տարիքի անչափահասներն են, հատկապես՝ աղջիկները:

Ծնողների հետ հիմնախնդրի մասին խոսելու և կարևորելու մի շարք կարևոր կետեր.

- Քննարկել դեռահասի հետ ալկոհոլի չարաշահման կամ հնարավոր այլ նյութերի ազդեցության պարագայում գիտակցության նեղացման հետևանքները. վիճակագրությունը ցույց է տալիս, որ հիմնականում ալկոհոլի կամ հյութի մեջ լինում են նյութեր, որոնք նպաստում են գիտակցության նեղացմանը, ինչի արդյունքում դժվարանում է իրենց նկատմամբ ոչ ցանկալի գործողությունների կանխարգելումը:
- Դեռահասի հետ խոսել այն մասին, որ եթե դիմացինն է վճարել ժամադրության ընթացքում օրինակ՝ սուրճի կամ թեյի համար, դա չի նշանակում, որ դեռահասը ինչ-որ բան է պարտք դիմացինին և ցանկացած պահի, եթե դեռահասը իրեն լավ չի զգում, կարող է հեռանալ :
- Զգուշացնել դեռահասին, որպեսզի վստահելի ընկերոջ, հարազատի պատմի ժամադրության մասին, նախօրոք պլանավորեն մի քանի հուշող ազդանշաններ, որ խոսելու պարագայում կօգնի հասկանալ, որ դեռահասը օգնության կարիք ունի:
- Զգուշացնել դեռահասին, ժամադրության գնալիս հանդիպել հանրային վայրում, ցանկալի է ցերեկային ժամի, ցանկալի է իրեն ծանոթ վայրում:
- Զգուշացնել դեռահասին, որ անձնական իրերը առանց հսկողության չթողնի՝ մասնավորապես հյութ, որ խմում է, հեռախոս, պայուսակ:
- Վստահեցնել դեռահասին, որ ինքը կարող է հանդիպումը ցանկացած պահի կիսատ թողնել, եթե զգում է, որ իրեն տհաճ է, կամ վտանգ է զգում. մի՛ փորձիր լինել քաղաքավարի և չվիրավորել դիմացինին:
- Զգուշացնել դեռահասին, որ կարող է աղմուկ բարձրացնել ցանկացած պահի, երբ զգում է, որ վտանգ կա դիմացինից և օգնություն խնդրել մարդկանցից
- Ծնողի կողմից կարևոր մտքերից պիտի լինի նաև դեռահասի հետ խոսելիս փոխանցել այն գաղափարը, որ սեռական բռնության ենթարկվող անչափահասը ԵՐԲԵՔ մեղավոր չէ կատարվածի համար:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

Հաշվի առնելով դեռահասի **տարիքային ու անհատական առանձնահատկությունները**, ծնողը **համաձայնության** մասին պետք է խոսի իր դեռահասի հետ, բացատրելով, որ համաձայնությունը զուգընկերների միջև գիտակցված պայմանավորվածություն է սեռական ցանկացած տեսակի (գրկախառնվել, համբուրվել, սեռական հարաբերություն) ակտիվության մեջ **կամավոր** ներգրավվելու համար: Խոսել դեռահասի հետ, որ ինքը կարող է չեղարկել համաձայնությունը ցանկացած պահի, եթե անհարմարություն է զգում: Խոսել սպառնալիքի ազդեցությամբ տրված «համաձայնության» մասին, օրինակ, եթե դեռահասին դիմացինը սպառնում է, որ կվնասի, կբաժանվի, եթե իր հետ սեռական հարաբերություն չունենա, ինչից դրդված դեռահասը համաձայնություն է տալիս սեռական որևէ ակտիվության, ապա դա համաձայնություն չէ: Խոսել դեռահասի հետ, որ համաձայնություն պետք է ձեռք բերել յուրաքանչյուր սեռական ակտիվությունից առաջ:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: